

Իրանի և Տաջիկստանի կրոնական և մշակութային կապերի շուրջ. Իմամ Խոմեյնիի անվան բարեգործական հիմնադրամի գործունեությունը

ԵՊՀ իրանագիտության ամբիոն Իսրայելյան Արմեն (Ph.D)

Իրանի Իսլամական Հեղափոխության առաջնորդ Իմամ Խոմեյնիի գաղափարախոսության մեջ առանձնահատուկ կարևորություն էր տրվում մշակույթին: Մշակույթն է, որը ձևավորում է հասարակության, ազգի ինքնությունը և ապահովում հասարակության զարգացումն և նպաստում միջազգային հանրության մեջ իր տեղը գրավելուն: Ըստ Իմամ Խոմեյնիի՝ եթե որևէ երկիր, որն ունի ռազմական, տնտեսական, արդյունաբերական հզոր կարողություններ, սակայն չունի զարգացած մշակույթ, ապա այդ երկրի հասարակությունը չի կարող կայուն զարգացում ունենալ և մրցունակ լինել աշխարհում:

Իրանի Իսլամական Հանրապետության մշակութային քաղաքականության հայեցակարգը հաստատվել է 1992թ. ըստ որի՝ իսլամական հեղափոխության հռչակած սկզբունքների համաձայն՝ պետք է ակտիվ մշակութային երկխոսության մեջ մտնել տարբեր ազգերի և ժողովուրդների հետ, նպաստել իրանական մշակույթի և պարսկերենի տարածմանը, սերտ կապեր հաստատել արտասահմանում գտնվող մշակութային կենտրոնների հետ:

Ինչ վերաբերում է հետխորհրդային երկրների, մասնավորապես Տաջիկստանի հետ Իրանի մշակութային կապերին, ապա այստեղ կարևորագույն դերակատարություն են ունեցել պարսկերենը և պարսից գրականությունը, իրանական-իսլամական մշակույթը, որն իր ազդեցությունն է ունեցել նաև Կենտրոնական Ասիայի մյուս ժողովուրդների մշակույթների վրա:

Իրանը և Տաջիկստանը մասնագիտական գրականության մեջ ներկայացվում են որպես «Մեծ Իրանից» կտրված երկու երկրամասեր, որոնք ունեն քաղաքակրթական, մշակութային և լեզվական ընդհանրություններ: «Իրան-Տաջիկստան. Մեծ Իրանի երկու հատվածներ» ձևակերպմամբ հրատարակվել են մի շարք գրքեր, հոդվածներ ֆիլմեր:

Իրանի և Տաջիկստանի մշակութային-կրոնական կապերը Խորհրդային տարիներին և Խորհրդային միության (ԽՍՀՄ) փլուզումից հետո տարբերվում էին իրենց առանձնահատկությամբ:

Խորհրդային միության շրջանը

ԽՍՀՄ կարգերի հաստատմանը նախորդող ժամանակաշրջանում՝ 1919-1921թթ. Սամարղանդում հրատարակվում էին պարսկերեն-տաջիկերեն լեզուներով

օրաթերթեր, որոնցից կարելի է առանձնացնել «Շուկայի Ինդիլաբ» օրաթերթը, որի խմբագիրն էր Սադրիդդին Աինին:

Ընդհանրապես Կենտրոնական Ասիայի իրանախոս քաղաքներում, իրանական մշակութային-քաղաքակրթական կենտրոններում «իրանականությունը» մեծ ազդեցություն ուներ: Սակայն խորհրդային իշխանությունների՝ տարածաշրջանը արհեստական բաժանելու քաղաքականության պատճառով իրանցիների, իրանալեզու ժողովուրդների համար մշակութային, քաղաքակրթական, պատմական մեծ նշանակություն ունեցող Սամարղանդն ու Բուխարան հայտնվեցին Խորհրդային Ուզբեկականի կազմում, փոխարենը տաջիկների մայրաքաղաքը հռչակվեց ոչ թե իրանական աշխարհի կարևորագույն մշակութային կենտրոնը, այլ Դուշանբեն, որն այդ շրջանում առանձնապես չուներ մշակութային արժեք:

ԽՍՀՄ-ի կազմավորումից հետո, երբ գծվեցին ժամանակակից Կենտրոնական Ասիայի սահմանները, քաղաքական իրավիճակից թելադրված թեև Իրանը և Տաջիկստանը ֆիզիկապես հեռացան իրարից, սակայն երկու ժողովուրդների միջև հոգևոր-մշակութային կապը պահպանվեց: Տաջիկ մտավորականության շրջանում տաջիկերենը, պարսկական-տաջիկական մշակույթը, գրականությունը դիտվում էր որպես հպարտություն և ազգային բարձր ինքնագիտակցության ցուցիչ:

Նաև պետք է նշել, որ խորհրդային քաղաքականությունն այնուամենայնիվ իր բացասական ազդեցությունը թողել է տաջիկաիրանական մշակութային կապերի վրա, խորհրդային տարիներին Իրանը հնարավորություն չունեցավ Տաջիկստանի հետ ուղիղ կապ ունենալ, հաղորդակցությունը տեղի էր ունենում միջնորդավորված՝ Մոսկվայի միջոցով:

Չնայած խորհրդային քաղաքականությանը՝ տաջիկներն իրենց մտավորականների շնորհիվ ոչ միայն կարողացան պահպանել ազգային, մշակութային արժեքները, (լեզուն, ավանդույթները, երաժշտությունը, Նովռուզի տոնակատարությունը):

ԽՍՀՄ գոյության վերջին տարիներին Տաջիկստանում ազգային բարձր ինքնագիտակցությամբ մտավորականների մի սերունդ էր ձևավորվել, որը Տաջիկստանի անկախության հռչակումից հետո ձևավորեց ազգային արժեքներին վերադառնալու պահանջները:

Տաջիկստանի անկախության հռչակումից հետո

Իրանի և Տաջիկստանի մշակութային կապերն ավելի ակտիվացան ԽՍՀՄ-ի փլուզումից և Տաջիկստանի անկախության հռչակումից հետո: Իրանն առաջին երկրներից էր, որ պաշտոնապես ճանաչեց Տաջիկստանի անկախությունը, բացվեց դեսպանություն, տեղի ունեցան բարձր մակարդակի փոխայցեր: Մասնավորապես 1992թ. Տաջիկստանի նախագահ Ռահմոն Նաբինն է այցելում Իրան ստորագրվում են մշակույթին և գիտության ոլորտին առնչվող կարևոր փաստաթղթեր,

իսկ արդեն 1995թ. Էմոմալի Ռահմոնի այցի ընթացքում Իրանում պաշտոնապես բացվում է Տաջիկստանի դեսպանությունը:

Թեև Տաջիկստանն Իրանի համար մեծ կարևորություն ունի էներգետիկայի տեսանկյունից, սակայն երկկողմ մշակութային կապերի խորացումը, պարսկերենի տարածումը ընդգրկված է եղել Իրանի բոլոր կառավարությունների, բոլոր նախագահների քաղաքական օրակարգերում առանձնահատուկ տեղ է գրավել՝ կարևորվելով իրանալեզու երկրների համագործակցությունը, պարսկերենի և իրանական մշակույթի տարածումը:

Դիվանագիտական հարաբերություններ հաստատելուց հետո Իրանի Իսլամական Հանրապետության մշակութային քաղաքականության հայեցակարգի համաձայն՝ Տաջիկստանի հետ արդյունավետ համագործակցություն է ծավալվում՝ հետևյալ ոլորտներում՝

Գրականության ոլորտ՝ Իրանում և Տաջիկստանում համապատասխանաբար տպվում են տաջիկ և իրանցի բանաստեղծների ժողովածուները: Տաջիկստանում մեծ հեղինակություն էին վայելում իրանցի բանաստեղծներ Նադեր Նադերփուրը, Սիավոշ Քասրային և այլն:

1968թ. Դուշանբեում տեղի է ունենում պարսից պոեզիայի համաշխարհային համաժողովը:

1992թ. Իրանում անցկացվող ամենամյա «Տարվա գիրք» մրցանակաբաշխության ժամանակ Սաթիմ Ուլուղ Ջադեի «Ֆերդուսի» վեպը զբաղեցնում է առաջին հորիզոնականը:

2002թ. Իրանում հատուկ մրցանակի է արժանանում դոկտոր Սիմեդդինովի «Միջին պարսկերեն բառարանը»:

Արվեստի և երաժշտության ոլորտ

1990թ. Տաջիկստանում Մասանյան շրջանի երաժիշտ, բանաստեղծ, երգահան Բարբադ Մերվազիի 1400-ամյակի առթիվ կազմակերպված տոնակատարությանն իր մասնակցությունն է բերում Մոհամմադ Ռեզա Շաջարիանի գլխավորությամբ «Մոլանա» ավանդական համույթը:

Իրանական թատերական խմբերի մասնակցում են 1994թ. Տաջիկստանում կազմակերպված «Շահնամեի» 1000-ամյակին նվիրված տոնակատարություններին, 1999թ. տաջիկական թատերական խումբն Իրանում անցկացված «Դահեյե Ֆաջրի» ներկայացնում է «Բահրամ Չուբին» թատերական ներկայացումը:

Կարևոր իրադարձություն էր նաև Դուշանբեի սրտում գտնվող Լենինի արձանը մեծանուն իրանցի բանաստեղծ Ֆիդուսիի արձանով փոխարինելու փաստը[2]:

Գիտական ոլորտ

2002թ. Դուշանբեում կազմակերպվում է «Պետությունը և Մասանյան քաղաքակրթությունը» խորագրով միջազգային կոնֆերանսը, որին մասնակցում է է Իրանը, նույն թվականին Մաշհադում Մասանյան պետության ստեղծման 1100-

ամյակին նվիրված «Սամանյան շրջանի մշակույթ, քաղաքակրթություն, և պատմություն» խորգրով միջազգային կոնֆերանս է հրավիրվում: Լույս է տեսնում «Սամանյանները և պարսկական-տաջիկական քաղաքակրթության վերածնունդը» վերնագրով գիրքը՝ տաջիկերենով և պարսկերենով:

Ահա այս մի քանի դրվագները փաստում են, թե իրանականությունն ինչպես էր արտահայտվում Տաջիկստանի մշակութային քաղաքականության մեջ:

Երկկողմ մշակութային քաղաքականությունն ավելի համակարգված ներկայացնելու նպատակով Իրանի և Տաջիկստանի կողմից հիմնվում է մշակութային կենտրոններ:

Տաջիկստանում Իրանի դեսպանության մշակութային կենտրոնի ակտիվ գործունեության արդյունքում հազարավոր գրքեր են տրամադրվում Տաջիկստանի գրադարաններին:

Խոմեյնիի կոմիտեն

Տաջիկստանի հետ մշակութային և կրոնական կապերի խորացման գործում կարևոր և նշանակալի դերակատարություն է ունեցել «Իմամ Խոմեյնիի անվան բարեգործական կոմիտեն», որը ձևավորվելով իսլամական հեղափոխության հաղթանակից հետո մինչ օրս Մերձավոր Արևելքի, Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի մուսուլմանական երկրների շիաների սոցիալական խնդիրների լուծմանը, աջակցություն ցուցաբերելուն ուղղված բազմաթիվ ծրագրեր է իրականացրել:

Տաջիկստանում Հիմնադրամն իր գործունեությունը սկսել է 1994թ.՝ իսլամական հեղափոխության հաղթանակին նվիրված միջոցառման օրը Դուշանբեում պաշտոնապես մեկնարկում է Հիմնադրաի գործունեությունը:

Իմամ Խոմեյնիի բարեգործական հիմնադրամը բաղկացած էր հետևյալ ստորաբաժանումներից՝

Կենտրոնական գրասենյակը տեղակայված էր Դուշանբեում, որին կից 6 ներկայացուցչություն գործում էր Տաջիկստանի Դորդան Թափա, Քուլսբ, Վահդաթ, Նուրաբադ, Բադախշան, Խոջանդ շրջաններում:

Բացի հիմնական ներկայացուցչությունների՝ Հիմնադրամի ներքո բարեգործության և մատակարարման ուղղությամբ գործում է 20 ենթակոմիտե, 1 հիվանդանոց, 19 ուսումնական կենտրոն և 1 մշակույթի կենտրոն:

Կոմիտեի գործունեությունը թիրախային խմբերն են՝

Անօթևանները, հատկապես Տաջիկստանում քաղաքացիական պատերազմից տուժած հազարավոր մուսուլմաններին է աջակցություն ցուցաբերվել, հատկացվել է բնակարաններ, կամ իրականացվել է բնակֆոնդի վերականգնում

Մշակութային գործիչները, դասախոսներ, ուսանողներ, աշակերտները: Հատկացվել է կրթաթոշակ, կազմակերպվել է լեզվի ուսուցում, աջակցություն ֆիլմարտադրությանը, սկավառակների թողարկում և այլն:

Աջակցություն նաև գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ զբաղվողներին:

Ինչ վերաբերում է Հիմնադրամի ներկայիս գործունեությանը՝ ապա 2015թ. Իրանի և Տաջիկստանի հարաբերություններում մի շարք հարցերի շուրջ թյուրըմբռնում առաջացավ, որոնցից օգտվեցին Իրանի և Տաջիկստանի հարաբերությունների վատթարացմամբ շահագրգռված խմբերը: Այդ չհասկացվածությունն ի վերջո հանգեցրեց փոխադարձ մեղադրանքների և 2016թ. Տաջիկստանի արդարադատության նախարարության որոշմամբ կասեցվեց Իմամ Խոմեյնիի անվան բարեգործական հիմնադրամի գործունեությունը, ի դեպ, դրանից շուրջ երկու-երեք տարի առաջ Հիմնադրամի գործունեությունը դադարեցվել էր նաև Ադրբեջանի Հանրապետությունում:

Թեև Տաջիկստանում Իրանի դեսպան Հոջաթոլլահ Ֆադանին հայտարարել է, որ ԻԻՀ դեսպանության որոշմամբ է կասեցվել, այլ ոչ թե Տաջիկստանի իշխանությունների: 2017թ. Իրանի և Տաջիկստանի հարաբերություններում մեկ երկու տարի տևած լարվածությունը թուլացնելու և փոխադարձ փոխվստահությունը վերականգնելու նպատակով Իրանի ԱԳ նախարարն այցելեց Դուշանբե, արդեն իսկ նկատվում է երկու իրանալեզու երկրները կարևորում են երկկողմ հարաբերություններում առաջացած թյուրըմբռնումները մի կողմ թողնելու անհրաժեշտությունը և հարգելով միմյանց շահերը պատրաստ են խորացնելու երկկողմ մշակութային կապերը: